



Սաղմոսներու վերնագրերէն տասն-երկուքը Ասաիւի անունը ունին. ասոնցմէ ոմանք վարդապետական սքանչելի քերթուածներ են: Ասաիւ զլիակաւոր երաժիշտներէն մէկն էր. սակայն իրեն ընծայուած բոլոր Սաղմոսներն իրենը չեն, այլ իր սերունդէն մէկուն, կամ նոյնանուն ուրիշ Սաղմոսերգուի մը:

Կորնի տրուած են տասնմէկ լաւագոյն Սաղմոսներ. հեղինակը անձնապէս յիշատակուած է, բացի Զէ Սաղմոսէն, եման Եղբայրացիի յօրինուած: Իսկ եթան Եղբայրացիի կը տրուի ԶԸ Սաղմոսը, եմանի նման՝ Դաւթի երգիչներէն մէկուն, սակայն հայերէն թարգմանութեան մէջ հաւասարապէս եմանի ընծայուած է:

Չանագան են հետեւաբար Սաղմոսներու զրիչները: Ամէնէն հինը՝ ԶԹ Սաղմոսը, Մովսէսի անունը կը կրէ. իսկ նորագոյններն են Եղբի կամ Մակարայեցուց ժամանակ յօրինուածները: Անոնք որ Դաւթի անունը կը կրեն՝ Քրիստոսէ մէկ զար առաջ են: Ասաիւի եւ Կորնի որդիներուն ընծայուածներէն ոմանք, եւ մանաւանդ անանունները՝ անստոյգ ժամանակի են: Աշտիճանաց օրհնութիւնք կոչուածները, ձժԹ - ձԼԳ Սաղմոսները, գերութենէն վերջ գրուած են. իսկ ձՆԶ-ձԾ Սաղմոսները հաւանօրէն Երուսաղէմի պարիսպներուն նորոգութեան նաւակաւորի առիթով շարադրուած են, Նեեմիի օրով: Արդի բանասէրներէն շատերու կարծիքով՝ Սաղմոսներէն մեծ մաս մը Մակարայեցուց ատեն յօրինուած են (Հմմտ. նաեւ ՂԵ եւ ձԳ Սաղմոսները Ա. Մնաց. ԺԶ, 8-43ի հետ):

Սաղմոսներու հինգ զիրքերէն առաջինը, որ մի միայն Դաւթեան է, յօրինուած է հաւանօրէն սուրբ թագաւորէն: Երկրորդը՝ մաս մը Դաւթեան եւ մաս մ'ալ Ղեւտական, կարգ մը բանասէրներու կարծիքով՝ շարադրուած Եղեկիայի ժամանակ: Չենք կրնար ըսել թէ ո՛ր զարուն հաւաքուած են Գ եւ Դ զրքերուն երգերը, հաւանօրէն Եղբի օրով: Եղբ է դարձեալ,

եւ կամ անձանօթ հաւաքող մը իրմէ ետք, հինգերորդ զրքին հաւաքողը:

Սաղմոսներուն նիւթն է ընդհանրապէս Աստուած, եւ մարդս՝ Աստուծոյ առջեւ: Աստուած՝ իր մեծութեամբ, բարութեամբ, ոյրմութեամբ, բարեբարութեամբ, արդարութեամբ. իսկ մարդը՝ իր անարութիւններով, խեղճութեամբ, փոքրիկութեամբ, անհաւատարմութիւններով՝ կարօտ իր Արարչին օգնութեան:

Սաղմոսերգուին առաջին փոյթը կ'առաջնորդէ զինքը միշտ առ Աստուած. այս երգերուն մէջ Աստուած ոչ թէ միայն ամէնէն ընդարձակ տեղը կը զբաւէ, այլ հարկը յիսուն երգերէ կազմուած այս հաւաքածոյին տասնեւեօթը միայն՝ առաջին համարին մէջ իր անունը չեն կրեր: Սաղմոսներուն ամէնէն ցայտուն յատկանիւնն է սերտ միութիւն ընդհանրապէս Աստուծոյ հետ:

Աստուծմէ ետք, երրայական քնարերգակ բանաստեղծութեան առարկան՝ մարդն է մասնաւորապէս, ոչ յատուկ՝ այլ ընդհանուր մարդը: Դաւթի ոչ թէ իր անունով միայն կը խօսի, այլ ամբողջ մարդկութեան կողմէ. ուստի, երբ քրիստոնեայ հանրութիւնը հրեայ քերթողին բանաստեղծութիւնը կ'երգէ, իրը ցոլացնող իր անձնական զբաղումները եւ յատուկ մտածութիւնները, իրեն կը սեփականէ անոր համար եղածները. թէպէտ հեղինակը անձնական պարագաներուն առիթով յօրինած ըլլայ իր երգերը, սակայն Պաղեստինի անձուկ հորիզոնի սահմաններէն դուրս կը ձգտի, եւ ամէնէն աւելի անձնական Սաղմոսներու մէջ ալ ան ամէնուն կողմէ է որ կը խօսի: Երբ Գողգոթի վրայ կատարած յաղթանակը կ'երգէ (Սղմ. ձՆԳ), չ'ըսեր երբեք Աստուծոյ

Ո՞վ եմ ես, Տէր, որ իմ վրայ խորհիս. այլ իր անձնականութենէն բարձրանալով, կը զոչէ:

Տէր, ո՞ է մարդ զի յայտնեցեր նմա, Կամ որդի մարդոյ՝ քէ համարիս ինչ զմա: Մարդ նանրութեան նմանեաց,

Եւ աւուրք նորա որպէս հովանի անցին. (Հմ. 3-4):

Մտածութեան եւ տեսութեան այս ընդարձակութիւնը շատ աւելի զգալի է, քան իր դորժածած լեզուն՝ որ ատակ չէ ընդհանրութեան. երբայեցեքէնի մէջ վերացական եւ ընդհանուր գաղափարները թուի թէ զոյութիւն չունին. սակայն Սաղմոսերգուին հանճարը զիսէ լրացնել այս պակասը. իր երգերուն մէջ անդադար կը հակադրէ մարդուն փոքրիկութիւնը եւ խեղճութիւնը՝ Աստուծոյ մեծութեան եւ կատարելութեան:

Տեսից գերկիսն գգարծս մատանց քոց, Զլուսին եւ գաստեղս գորս դու հաստատե- Ո՞վ է մարդ՝ զի յիշես դու զմա, [ցեր: Կամ որդի մարդոյ՝ քէ այց ինչ արասցես [դու նմա (Սղմ. Ը. 4-5):

Հիանալի այս տողերը, որ ութերորդ Սաղմոսին մէջ կը կարդանք, ամէնէն աւելի աւարտեալ եւ կատարեալ քերթուածներէն մէկը, հին կամ նոր բոլոր զըրականութիւններու մէջ, տարբեր ձեւի մը ներքեւ կը հանդիպինք սրբազան երգերուն ուրիշ մասերուն մէջ, ուր նմանապէս արարածը հակադրութեան մէջ գրուած է իր Արարչին:

Սակայն Դաւթի չի գոհանար մարդուն վրայ այսպէս ընդհանուր խօսելով, աւելի կ'ընդարձակէ իր ընդհանրացումները՝ իր Աստուծմէ կը խնդրէ դատել ու պահելը Աստուծմէ կը խնդրէ դատել ու պահելը թոյլտրութիւնները. ան յանդուգն թոյլտրութիւն մը կը պարփակէ իր աղօթքին մէջ բոլոր Ժողովուրդները, որ կը մար-

տընչին Տիրոջ դէմ: Կ'ուզէ վրէժ խընդրել Փղշտացիներէն, եւ Աստուծմէ կը պահանջէ ոչ թէ միայն Գեթի բնակիչներուն նուաստացումը, այլ բոլոր հեթանոսներուն (Սղմ. ԾԵ):

Դաւթի երգերուն մէջ արդարն ու մեղաւորը, բարին ու չարը, մեծն ու փոքրը, հարուստն ու աղքատը այս ոճով ընդհանուր նշանակներու կը վերածուին. եւ այսպէսով կ'ընդլայնէ ու կ'ընդարձակէ իր բանաստեղծութեան հորիզոնը, որ իր որդւոյն Սողոմոնի օրով՝ շատ աւելի բարձր սլացք պիտի ստանար:

Սաղմոսներուն մէկ ուրիշ յատկանիւն ալ, որ շատ կարեւոր է նշել, այն է՝ որ սրբազան այս երգերուն մէջ Աստուծոյ հանդէպ գրուած մարդը՝ շատ անգամ Աստուածամարդն է, Մեսիան, ներկայացուցիչ մարդկութեան՝ իր Հօրը առջեւ: Հեղինակը յաճախ Յիսուսի անունով կը խօսի, կամ գէթ այն բացատրութեամբ՝ որ կարելի է իրեն պատշաճեցնել: Աստուած՝ Սաղմոսերգուն մարդկութեան զգացումներուն մեկնիչն ընելով, այդ նոյն գործով իր Որդւոյն զգացումներուն արտայայտողն ըրաւ, այն որ երկրորդ Ադամ՝ մարդն է գերազանց. այսպէսով է որ Դաւթի աղագակը Մեսիայի եւ մարդկային բնութեան գերագոյն գոչիւնը դարձաւ: (Հմմտ. Vigoureux - La Sainte Bible Polyglotte, Tome IV. - Չամչեան Մեկն. Սաղմոսաց, հտ. Ա.):

(Շար. 2)

Հ. ՔԵՐՈՒՄԻ Ա. ԶՐԱՔԵՆ